ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N . Covid19-AUA

ք.Երևան «10» հունիս 2020 թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրեն Ալեքսանդր Բազարչյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի Ամերիկյան համալսարան» հիմնադրամը, ի դեմս նախագահ/գլխավոր տնօրեն Կարին Մարկիդեսի, որը գործում է Հայաստանի Ամերիկյան համալսարան հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 23-րդ կետր 1-ին ենթակետի (ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ. կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ իրականացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3), ինչպես նաև յուրաքանչյուր փուլի համար գրավոր տեքստային հաշվետվություն:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և հանձնման-ընդունման արձանագրությունը Պատվիրատուի կողմից ստորագրված:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **4468484.64** (չորս միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր ութսուն չորս դրամ վաթսունչորս լումա) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը (ծրագրի համակարգում, որակի ապահովում, դաշտային աշխատանքների իրականացում, տրանսպորտային ծախսեր և այլն)՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է աշխատանքների ավարտից հետո, վերջնական հաշվետվության ներկայացման պայմանում, հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: 7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	"Հայաստանի Ամերիկյան Համալսարան" հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/4	հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 40
Բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ	Բանկ՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
Հ/Հ 163058101441	Հ/հ՝ 001-006402-001
ՀՎՀՀ 00011624	ՀՎՀՀ՝ 01511187
---------- Ա.Բաղդասարյան (ստորագրություն)	---------- Կ. Մարկիդես (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1

« 10 » հունիս, 2020 թ. կնքված

ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
	73111100//	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	հատ	4468484.64	1	Կոմիտաս 49/4	2020 թ. ի օգոստոս

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հայաստանում բուժաշխատողների շրջանում COVID-19-ի հակամարմինների ուսումնասիրություն

Ներածություն

2019թ. դեկտեմբերին Չինաստանի Ուհան քաղաքում առաջին անգամ հայտնաբերված նոր կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ամբողջ աշխարհում 2020 թ. Հունիսի 8-ի դրությամբ գրանցվել է ≈ 6,900,000 վարակման դեպք, ներառյալ ≈400,500 մահ:[1] Այնուամենայնիվ, գաղտնիք չէ, որ վիրուսի թեստավորումը շատ երկրներում իրականացվում է միայն հստակ ցուցումներով (օրինակ՝ ախտանշաններ ունեցող կամ նրանց հետ շփում ունեցած անձանց մոտ), թեթև ընթացքով կամ առանց ախտանշանների շատ դեպքեր դուրս են մնում վիճակագրությունից: Արդյունքում ստացվում է մահացության և բնակչության շրջանում վարակի նկատմամբ իմունիտետի իրական աստիճանի վերաբերյալ ոչ ստույգ համաճարակաբանական պատկեր:

Փորձելով լրացնել բնակչության շրջանում SARS-COV-2 վարակի նկատմամբ իմունիտետի վերաբերյալ գիտական տվյալների բացը՝ աշխարհում նկատվում է լայնածավալ թեստավորումներ անցկացնելու միտում տարբեր թեստերի կիրառմամբ:

Մասնավորապես, լայն տարածում են ստանում շճաբանական (sero-epidemiological) հետազոտությունները, որոնք որոշում են իմուն համակարգի կողմից COVID-19-ի դեմ արտադրված հակամարմինների առկայությունն արյան մեջ:[3] Նմանատիպ հետազոտություններ արդեն իրականացվել են Չինաստանում, Սինգապուրում, ԱՄՆ-ում և բազմաթիվ այլ երկրներում:[4] Գերմանիայի առավել շատ հիվանդացության մակարդակ ունեցող քաղաքներից մեկում լայնածավալ իմուն թեստավորումը ցույց է տվել, որ բնակչության 14 %-ն ունի իմունիտետ COVID-19-ի դեմ:[5] Ռուսաստանի Դաշնությունում COVID-19-ով հիվանդների տեղափոխման ժամանակ նրանց հետ շփում ունեցած բժշկական անձնակազմի շրջանում կատարված հետազոտությունը պարզել է, որ նրանց միայն 3%-ն ունի իմունիտետ:[6] Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը սկսում է Solidarity II ծրագիրը, որը նպատակ ունի որոշել բնակչության մեջ վիրուսի դեմ հակամարմինների առկայությունը ընդգրկված երկրներում:[2]

COVID-19-ից բուժված անձանց իմունիտետի, և հատկապես դրա տևողության վերաբերյալ տվյալները սուղ են:[7] Այնուամենայնիվ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ բնակչության շրջանում առկա իմունիտետի իրական աստիճանի բացահայտումը կարող է հիմք հանդիսանալ այս հիվանդության դեմ պայքարում արդյունավետ մարտավարություն կիրառելու համար:

Գոյություն ունի վարակիչ հիվանդությունների ախտորոշման երկու հիմնական եղանակ. մոլեկուլային և շճաբանական: Մոլեկուլային հետազոտությունները հայտնաբերում են պաթոգենը, երբ այն գտնվում է օրգանիզմում:
Ներկայումս SARS-CoV-2 վիրուսի հայտնաբերման և ախտորոշման համար օգտագործվում է հետադարձ տրանսկրիպտազայի պոլիմերազային շղթայական ռեակցիան (RT-PCR): Այս հետազոտությունը տալիս է որակական տեղեկատվություն՝ դրական կամ բացասական, ինչպես նաև քանակական տեղեկատվություն շրջանառվող վիրուսի քանակի վերաբերյալ: Շճաբանական կամ հակամարմինների հետազոտությունները հայտնաբերում են իմունոլոգլոբուլին M (IgM) և G (IgG) հակամարմինների առկայությունը և/կամ քանակը: Ներկայիս գիտական տվյալներով այս հակամարմինները սկսում են առաջանալ SARS-CoV-2-ով վարակումից 6-10 օր անց:
IgM-ի քանակը հասնում է պիկին SARS-CoV-2-ով վարակումից 12 օր անց: Նկարագրված է, որ IgG-ի քանակը հասնում է պիկին SARS-CoV-2-ով վարակումից 17 օր անց և պահպանվում է առնվազն 49 օր:

Այս հետազոտության նպատակն է բացահայտել, թե 2020թ.-ի մարտ ամսից մինչև մայիսն ընկած ժամանակահատվածում, Հայաստանում COVID-19-ի դեմ պայքարում առաջնային բուժաշխատողների քանի՞ տոկոսի մոտ են առկա հիվանդության դեմ արտադրված IgM և IgG հակամարմինները:

Առաջարկվում է իրականացնել հակամարմինների բացահայտմանն ուղղված թեստավորում առողջապահության ոլորտի աշխատակիցների շրջանում, մասնավորապես, առաջնագծում գտնվող բուժաշխատողների համատարած ստուգում (census):

Մեթոդաբանություն

Ընտրանքի ձևավորում

Բուժաշխատողների շրջանում թեստավորումն իրականացնելու համար կընդգրկվեն ՀՀ-ում ի սկզբանե COVID-19-ի լաբորատոր ախտորոշում և բուժում իրականացնող երեք ամենամեծ բուժհաստատությունները, որոնցից երկուսը տեղակայված են Երևանում, մեկը մարզում, ինչպես նաև Երևան քաղաքի առողջության առաջնային պահպանման ոչ մասնավոր 17 հաստատություններից (պոլիկլինիկա) 8-ում, որոնք ամենամեծ թվով բնակչությանն են սպասարկում (40 000 և ավել բնակչություն): Հաշվի է առնվել ընտանեկան բժիշկ և բուժքույրերի թիվը նրանցից յուրաքանչյուրում և մեկ այցով հնարավորինս բոլոր բուժաշխատողներին թեստավորելու հնարավորությունը:

Բուժաշխատողների թիվը ընտրված հաստատություններում կազմում է շուրջ 1000 մարդ (բժիշկ, բուժքույր, մայրապետ):

Մասնակիցների ընդգրկում

Քանի որ հետազոտությունն իրականացվում է ՀՀ ԱՆ-ի հետ համագործակցությամբ, վերջինս կապահովի անհրաժեշտ տվյալների հասանելիությունը հետազոտական թիմի համար՝ ներառյալ բուժաշխատողների անուն, ազգանունները, աշխատավայրը և հեռախոսահամարները: Հետազոտական թիմը կտեղեկացնի հաստատության ղեկավարությանը, որոնց միջոցով էլ բուժաշխատողները կհրավիրվեն թեստավորման իրենց իսկ հաստատություններում առկա նմուշառման սենյակներում

կամ շարժական կլինիկայում (եթե տվյալ հաստատությունը չունի համապատասխան սենյակ):

Մարդկային կուտակումներից խուսափելու և անհրաժեշտ հեռավորությունը պահպանելու համար հետազոտական թիմը կկազմի ժամային ինտերվալներ և յուրաքանչյուր հաստության ղեկավարության միջոցով մասնակիցներին կհրավիրի հետազոտությանը մասնակցելու առանձին ժամերի: Շարժական կլինիկան գործարկելու դեպքում վերջինիս շուրջը կլինեն նաև նշագծեր մասնակիցների միջև անհրաժեշտ հեռավորությունը պահպանելու համար:

Տվյալների հավաքագրում

Հետազոտական թիմի անդամը մասնակցից գրավոր իրազեկ համաձայնություն ստանալուց հետո կներառի մասնակցին տվյալների հավաքագրման փուլերում:

Տվյալների հավաքագրումը տեղի կունենա թեստավորման՝ տվյալ հաստատությունում առկա նմուշառման սենյակում կամ շարժական կլինիկայում (եթե տվյալ հաստատությունը չունի համապատասխան սենյակ):

Տվյալների հավաքագրման ընթացքում կօգտագործվեն հետազոտության մասնակցության և լաբորատոր նմուշառման ձևաթղթեր: Նմուշառումից հետո հեռախոսով էլեկտրոնային պլանշետներով հարցազրույցի միջոցով կհավաքագրվեն հավելյալ տվյալներ բուժհաստատության աշխատողներից:

Տվյալների հավաքագրման ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործընթացները.

1. ELISA թեստավորում (շճաբանական հետազոտություն)՝ որոշելու IgM և IgG հակամարմինների առկայությունը:

2. Հարցում, որը ներառում է ժողովրդագրական տվյալների և հիվանդության ախտանշանների մասին տեղեկությունների հավաքագրում թեստավորվող անձանց շրջանում:

Հարցաշարը մշակվել է ԱՀԿ-ի կողմից նմանատիպ հետազոտությունների համար մշակված հետազոտական գործիքի հիման վրա: Պարունակում է հարցրեր ժողովորդագրական տվյալների, հիվանդության ախտանաշանների, ռիսկի գործոնների և ներկա առողջական վիճակի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ պարունակում է 30 հարց:

Թեստերի հետազոտություններն իրականացվելու են լաբորատոր պայմաններում, ուստի կենսաբանական նմուշները պետք է տեղափոխել նմուշառման վայրից, համաձայն Առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 14-ի «Վտանգավոր բեռների փոխադրման նկատմամբ սանիտարահիգիենիկ պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1409-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 38-Ն հրամանի պահանջների: Լաբորատոր հետազոտության համար պատասխանատու է ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի լաբորատորիան:

Տվյալների հավաքագրումն իրականացվելու է համապատասխան որակավորում ունեցող և նախապես վերապատրաստված մասնագետների կողմից: Դեմ առ դեմ հարցումը կիրականացնի հետազոտական թիմի կողմից վերապատրաստված հարցազրուցավարը:

Հայաստանի Ամերիկյան համալսարան հիմնադրամի բյուջեն ներառում է միայն աշխատակիցների վճարումները: Այն չի ներառում լաբորատոր նյութերի, նմուշառման համար անհրաժեշտ բժշկական պարագաների, անհատական պաշտպանիչ հանդերձանքի և թեստերի գնման ծախսերը:

Հավելված N 2

« 10» հունիս, 2020 թ. կնքված

ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ

դրամ

Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թվականին, ըստ ամիսների այդ թվում		
		Հետազոտություն	հուլիս 2020	օգոստոս, 2020	Ընդամենը
			0 ՀՀ դրամ	4468484.64 ՀՀ դրամ	4468484.64 ՀՀ դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ.